

ԽԱՐԱԿԱՅԻՆ

ԳԱԻԱՌԱՑԻՆԵՐՈՒ
ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԷՍԸ

Ա. ՏԱՐԻ

30 ՄԱՅԻՍ 1912

ԹԻՒ 16

Խմբագրապետ

Մ. ԻՓԷՔՃԵԱՆ

Արտոնատեր

Հ. ԹԱՊԵՊԵԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Եղեամբ եւ մեր Տնտեսական վիճակը (խմբ.)

Ընկերային պայմաններու մեջ յառաջդիմութիւն (բարգ.)

Մայիս մեկ (Բան.)

Լեռնին համար

Արցունք (Բան.)

Լուսաստաններէ յետոյ յոռեստութիւն

Ա խարհի յեղափոխական մեծ շարժումները

Իսլաւային Լուրեր

Մ. ԻՓԷՔՃԵԱՆ

Գ. ԷՍԵՐԵԱՆ

Մ. ԲՐՈՒՏԵԱՆ

Յ. ԵՎԱՆԵԱՆ

Յ. ՓԱՓԱՋԵԱՆ

Դ. ԱԹԷՇԵԱՆ

Թ. ԺԱՄԿՈՋԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԱԶԴ

Թեւ հախորդ քիւնով ժանուցած էինք 15 րդ քիւին իրենց հաշիւներն ստորոշապէս չի մաքրող գործակալներուն ու բաժանորդներու անուններն անպայմանօրէն հրատարակել լուսանց բացառութեան, սակայն քանի մը գործակալներու խնդրանքին վրայ որոշեցինք մեր աղ մտադրութիւնը մինչեւ 17 րդ քիւ յետաձգել:

Արդ ներկայիս կը խնդրենք մեր բոլոր գործակալներէն ու բաժանորդներէն որ չիկ մը բարեխղճութիւն ունենան իրենց աննշան հաշիւները մաքրելու. հակառակ պարագային ո՛չ ոքի չի պիտի խնայենք, քանի որ քերթը լոյս ընծայելու համար դրամի պէտք ունինք:

ՏԵՂԱԿԱՆ ԻԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ,

Մեր զանձնիչ՝ Յակոբ Նալչանեան, երբ տեղական բաժանորդներու դրամի կը դիմէ, տնոնցմէ ումանք աննիմո առարկութիւններ ու կոտս վերաբերումներ ցոյց կուտան եղերս, փոխանակ իրենց բաժնեգիրը վճարելու, այդպսպնեւ երբ կրկնեն իրենց ընթացքը, յաջորդ քիւնէն սկսեալ պիտի տարալուինք իրենց հետ տեսնուիլ:

ԱՄԱՍԻԱ

Տպագր. ՅՈՎ. ՆԱՆՏԵԱՆ ԵՎ ԵԱՐՅԱՆ

«ԱՄԱՍԻԱ»-Ի ՀԱՍՑԷՆ

آماسیه ده «آماسیه» غزنه سی مدیریت

Խմբագրություն «ԱՄԱՍԻԱ» Կիսասեսեայ հասկէսի-Ամասիա

Rédaction de la Revue «AMASSIA», a Amassia (Turquie d'Asie)

ԱՄԱՍԻԱ

Կը հրատարակուի ամէն ամսու 15ին. քուրբերէն եւ հայերէն՝ բաժիններով: Թուրքերէն բաժինը մօտաւորապէս 4 էջ, իսկ հայերէնը 12 էջ. երկու բաժինը միասին միշտ 16 էջ պիտի ըլլայ: Բաժանորդներուն տարեկան 24 թիւ պիտի տրուի:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Թուրքիա տարեկան	1 մեկնիս	Արսասանեան տարեկան	3 գր.
» վեցամսեայ	0.50 »	» վեցամսեայ	2.50 »

Բաժնէզինը բացարձակապէս կալիսիկ է: Ծանոցումներու համար առանձին նպաստաւոր սրահներ կը տրուին:

Տասը օրինակ «Ամասիա» տպաւորողին մէկ օրինակ նուէր:

Կ. Պոլիս, 4/17 Մայիս 1912

Եկնի Վոլթօ Խան, թիւ 19.

Տ.

Հայ Տպագրութեան 400ամեակի Յանձնաժողովն կը խնդրէ Ձեր Ազնուութենէն որ յօդուածիք յետագայ զեկեյցը հրատարակել ձեր թերթի մօտակայ մէկ թիւին մէջ:

Կանխայայտ շնորհակալութեամբ

Ա. Տեհնապիտ

ԱՐՄԷՆ Գ. ԶԱՐԴԱՐԵԱՆ

Ա. Տեհնապիտ

ԼԵՒՈՆ ԼԱՐԵՆՑ

«Ապրիլ 29ին Կ. Պոլսոյ ազգ. Կեդրոնական Վարժարանի Ամփոթաբունին մէջ տեղի ունեցաւ Հայ Տպագրութեան 400ամեակի յօդուածական մարմնոյն 3րդ նիստը: Ներկայ էին Ձեռնարկի Միութեան, Հանրակրթութեան, և մօտաւոր լիազօր ներկայարարները:

Որոշուեցաւ՝

Ա. Դ. Դմիտրի Կովկաս, Ամերիկա և այլուր, ամէն տեղ միեւնոյն օրուան մէջ (նոյն յիմեր 23ին) տօնելու համար Հայ տպագրութեան 400ամեակը:

Բ. Հրատարակել Հայ Տպագրութեան 400ամեակի առթիւ անհատական զործեր տպարարարները՝ արտայայտուել միեւնոյն օրուան մէջ:

Գ. Հրատարակել Հայ Տպագրութեան պատմութիւնը, մասնագէտներու աշխատակալութեամբ, շնորհ մէջ զետեղելով էջեր առաջին անգամ տպագրուած հայ գրքի Պատգամներէն:

Դ. Հանդէսներ սարքել նոյն օրը ցերեկին կեդրոն տեղ մը, իսկ նոյն գիշերը՝ զանազան թաղերու մէջ:

Այս առթիւ յօդուածական մարմինը բնաբն 3 անդամներէ բաղկացեալ գործող զիր մօլով մը, ի գործ դնելու համար լեռնաբնալ որոշումները:»

ԽԱՅԱԿԱՆ

ԳԱԻԱՌԱՑԻՆԵՐՈՒ
ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԵՍԸ

Ա. ՏԱՐԻ

30 ՄԱՅԻՍ 1912

ԹԻԻ 16

Խմբագրական

ԵՂԵԱՄԸ ԵՒ ՄԵՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Ապրիլ 13 և 28ի եղեամի պատճառած միասը այնքան ազդած է ամբողջ Անտառլին ընդհանրապէս, իսկ Ամասիոյ համար մասնաւորապէս: Առանց անդրադառնալու այս մասին անցնի՝ ողջաւի անտեսել պիտի ըլլա՞ր մեր անտեսական արդէն քայքայուած վիճակը:

Եւ ի՞նչ տարի է իվիր դրամական Քրիզնեռու և քօրերսի պատճառով հաստատուած Քառանքիմանեռու ողջակի յառաջ բերած նիւթական կարիսը մեամներուն մասին դեռ խորհելու միջոց չունեցած՝ Թրքօ—Իտալական պատերազմը՝ այնպիսի անտեսական ծանր կացութիւն մը յառաջ բերաւ ամբողջ Օսմանեան հայրենիքին վրայ՝ որ բնական օրէն մեր շրջանակը անմասն պիտի չի մնար այս բոլորէն: Ներկայիս երբ Ամասիոյ երկրագործ և վաճառական դատակարգը իր ամբողջ յոյսը կեդրոնացուցած էր ներկայ տարւոյ բերքերուն վրայ՝ անոնք իսկ մէկ որուան մէջ ոճիւտցան, փճացան և 70—80,000 ոսկի մնաս յառաջ բերելով ամբողջ ժողովուրդը յուսահատութեան մասնեցին ընդհանրապէս՝ իսկ պարտիզլան դատակարգը մասնաւորապէս: քանի որ ան ուրիշ ու է միջոց չունի ապրուստի՝ բացի հողէն արտադրելիք հատոյթներէն:

Մենք տեսնելով պարտիզլան դատակարգի ծանր և յուսահատական կացութիւնը և հետաքրքրուելով անոր անտեսական վիճակով, այսպիսի

ժանր պարագաներու առթիւ եղեամի պատճառած վնասները աստիճան մը շեղաբացնելու համար ցոյց պիտի տանք գիտական այն նախնական մեջոյնները՝ որ քաղաքիս մէջ տեար Յակոբ Քլայն Իշ Այվասիյի մէջ իր ունեցած երկու այգիներուն մէջ գործածելով, յաջողած է երեք այգիներու թէ թթենիի տերեւներն և թէ բուսեղէնները ազատելու Խնք հետեւեալ կերպով կը պատմէ.

«Ապրիլ 13ին, առաւուսն, կէս օրուան և իրիկուան ջերմաչափի անհամեմատ փոփոխութիւնը 7էն 30ի և 30էն 6ի իջնելը կասկած տուաւ ինձ թէ օգին մէջ զգալի փոփոխութիւն մը առաջ պիտի գայ. և իրիկունը սկըսանք մուխ արտադրող նիւթեր հաւաքել. Գիշերը ժամը 5ին օգին մէջ թեւ ամպեր կային, սակայն անոնք ալքան թեթեւ էին՝ որ չէի կրնար փոտահիլ և չի վառել. քանի որ ջերմաչափը 5-5ու կէս ցոյց կուտար. Մուխ աշտադրելու համար գործածեցի չոր ճիւղեր, որոնք վառելէ վերջ վրան լեյուցի աղբաստան յարդ, և երբ անոնք ալ չարնալով վառիլ կ'սկսէր՝ վրան ջուր կը լեցնէի որ առաւ մուխ կ'արտադրէր. Թեթեւ հարաւային հով մը կար որով փոխանակ իմ այգիներուս մէջ վառելու դրացիին այգիին մէջ վառեցի որ մուխը կը լեցուէր իմ այգիներուս մէջ. իմ երկու այգիներուս մէջ կը գտնուէր նաև Մէյիս Ալիի այգին, կանուխէն համոզած էի զինք որ ինք ևս աչքստի մեր հետ և յիշեալն ալ եռանդով կ'աշխատէր մեր հետ. Մուխը տարածուեցաւ մինչև բաց պէտ և արշալոյսի մօտ ժամը 7ին հովին հոտները դադրելով մուխը այդ ամբողջ շրջանակին վրայ թանձր ամպի նման ծածկեց. Արեւածագին՝ մեր այգիները մօտէն զիրար չի տեսնելու չափ մոխով լեցուած էր, և այս պատճառով այդ շրջանակին մէջ չատ այգիներ եղեամէն ազատեցան, բացի բարձրի այգիներէն:

Ապրիլ 27ին Լօսմանի և Ասաթէփէի բարձունքներուն վրայ ձիւներ կ'երևալին. կէս օրուան մօտ Ատա թէփէի ձիւնը թէպէտ հալեցաւ՝ սակայն Լօքմանի վրայինը կեցած էր. Արեւմուտքին օդը թէև ամբողջովին պարզուած էր, սակայն ջերմաչափը զերօէն վեր 5 աստիճան ցոյց կուտար. Ալքան պաղը, և օգին պարզութիւնը որոշ նշաններ էին թէ կրկին եղեամ պիտի ունենանք. հետեւորար դարձեալ մուխ արտադրելու համար պտուղատուութիւն տեսանք. Գիշերը ժամը 5ին օդը պարզ էր. և ջերմաչափն այս աստիճան ցոյց կուտար զերօէն վեր, որով կրակները վառեցինք իրարմէ 10-15 մէթր հեռաւորութեամբ հարաւային արեւելեան կողմէն, քանի որ օգին հոտները ան կողմէն կուգար. ժամը 6ին հովին ընթացքը փոխուելով հիւսիսէն սկսաւ փչել. և անմիջապէս նոր կրակներ վառեցինք ան կողմէն և առաւ մուխ նկատեց արտադրել. ժամը 7ու կէսին հովը ամէն կողմէ դադրելով մուխը թանձր ամպի նման այգիներուն մէջ լեցուեցաւ. և ինչ այս ատեն ցող ալ չի կար և պաղը զերօէն վեր 1-1ու կէս ցոյց կուտար. ժամը 8ին զետին կողմէն ցուրտ հոտանք մը սկսաւ և գետին պէնէն ինկած ջու-

րին յառաջ բերած խոնաւ շրգիին պատճառով Ծ յապէի մէջ շերմաշափը զերոյէն վար Յի իջաւ և սառեցուց իմ ան ալցիս թէ բոյսերը և զէ տեւրեները. եթէ շորժուն տախտակէ պատ մը ունենայի (ինչ որ յառաջիկայ տարուան համար պիտի շինել տամ) պիտի դնէի գետին կողմէն եկած հոսանքին առջեւ և պիտի ազատէր նաեւ այս ալցիս ալ ինչպէս աշատեցաւ իմ ալցիէս վեր Սէիտ Արիի ալցին և իմ միւս ալցիս՝ ու անկէ վեր երրորդ ալցի մը ալ որոնց մէջ թէ տերեւները և թէ բոյսերը ամբողջութեամբ ապաւնած են՝ քանի որ միայն եղեամբ պիտի փնտռուէր. իսկ ան սլ ազատեցաւ մեր արտադրած մոխիրուն պատճառով. եթէ գետին ալց պէնայ չըլլար իմ ալցիս ալ պիտի չի սառէր կամ եթէ տախտակէ պատ մ'ունենայի՝ կրկին պիտի կրնայի ազատել»

Տեար Յակոբ Քլայնի, այս բացատրութիւններէն որոշ կերպով կը սեռանք թէ այսքան սառտիկ եղեամի պահուն երբ կըյածէ ազատել իր ալցին՝ թեթեւ եղեամբներու պահուն շատ հեշտ պիտի ըլլայ ազատ մնալ եղեամբի վաւերներէն. Սակայն խնդիր է թէ մեր պարտիզպանները պիտի կրնան հետեւիլ ցոյց տրուած միջոցներով իրենց նիւթական փճացման առաջը առնելու համար. մենք կը տարտկու պինք այս մասին և այս առթիւ պէտք կ'զգանք ուշադրութիւնը հրաւիրել հանրային պարտուց վարչութեան, երկրագործական պաշտօնէութեան, թաղապետութեան, առեւտրական սենեակին, ու նկատի ունենալով իրենց նիւթական շահը մասնաւոր չըջարեալստեան շուկայի ժողովրդեան բոլոր խաւերուն, տաշքեր լեզուներով եւ հասկնալի լեզուաւ ծանօթացնեն այն միջոցները՝ որ պիտի ազատէ անշան ծախքով եւ քիչ աշխատութեամբ իրենց բոյսերը եւ ծառերը. երկրորդ եղեամբ շրջանին կարեւոր կեցրոններու մէջ պէտք է պահել քանի մը պաշտօնեաներ որ օգին փութութիւնները նկատի ունենալով առաջնորդեն պարտիզպանները կրակ վառելու եւ միջոցներ գործածելու՝ որ ազատին այս փնտռներէն. Այս երկու նախնական միջոցներով կարելի պիտի ըլլայ նիւթական այսպիսի տաղնապնելու վերջ տալ գոնէ մասամբ. Մենք կը խորհինք թէ այս վարչութիւններու պարտականութիւնն է խորհիլ ծախել և անկէ վերջ հասցիները գտնելը

Անոնք որոնք կ'ուզեն տեսիլ ընդարձակ տեղեկութիւններ առնել թող գիտնեն խորագլխութեան կամ Տեար Յակոբ Քլայնի կատարեալ հաճութեամբ և սիրով պիտի տրուի յրացուցիչ տեղեկութիւններ

ՍԻՆԱՍ ԻՓԷՔԵԱՆ

ԸՆԿԵՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒ ՄԷՋ ՅԱՌԱՋԴԻՄՈՒԹԻՒՆ

Անշուշտ է թէ ընկերութեան մէջ մշտնապէս աշխատութիւնը չէ որ կը պահանջուի: Կը պահանջուի նաեւ որ մարդը կարենայ գործածել կարկինը թուղթի վրայ, չափելու համար ատողերու ընթացքը, և սորվել կտրել անցնել ծովերու: Կը պահանջուի որ օրստօրէ հակամէտ ըլլալ յիշատիկ տարագրութիւններու, յայտնելու համար պատճառը կայսրութիւններու անկման կամ կործանման, և սուր վիճակներէ կառավարելը: Լաւ ուրեմն, ամէն օր մեքենայի կամ հողային աշխատութիւններու նուիրուած մարդը չէ որ պիտի կրնայ գտնել այս օրէնքներու ըստոյգ է թէ հրեմն գիւղացի մը կրնայ լլլայ Սփօրս մը, տպագրութեան աշխատաւոր մը, Գրանքին մը, բայց այս բացառութիւնները հազուադէպ են: Ձեռակա աշխատութեան նուիրուած որդիներն են որ իրենց հօր ձեռքով, իրենց պարսնէն վեր բարձրացած, պիտի ելլեն քնկերական սանդղակի աստիճաններէն վեր և պիտի հասնին իմացական վսեմ (sublime) աշխատութիւններու:

Հայր մը կրնայ եղած ըլլալ պարզ գիւղացի մը, տարագործութեան մէջ աշխատող մը, կամ նաեւ վրայ նաւուղ մը, եթէ հայրը հողագործ կամ տնտես (econo-
me) եղած է, որդին պիտի լլլայ ագա-
րակապան, գործարանատէր, նաւապետ, կրտսեր որդին սեղանաւոր, նոտար, բժ-
ժիշկ, փաստաւան, կամ թերեւ նահա-
գապետ: Այսպէս իրարմէ վեր կը բար-
ձրանան սերունդները, կ'աճին, կերպով
մը, նման այն ծառին՝ որ իրաքանդիւր
գարնան դարձին կ'արձակէ նոր ծիլեր
(rejeton), որոնք, գարնան խոտին նման,
դալար, թարմ և կանանչ ըլլալով, աշնան
մէջ կ'աճեն ձեւ և փայտի ատկունութիւն
յետոյ պզտիկ ճիւղեր ըլլալով, հետեւեալ

տարին, կը ծածկուին իրենց կարգին ու-
րիշ ծիլերով: Ժամանակ անցնելէ վերջ
հաստ ճիւղերու՝ կը վերածուին փոխա-
նորդելով նոյն իսկ մայր ճիւղին, և այս
երեսից ամէն կողմ երևան գալով, վեր-
ջապէս հողը կ'ընդգրկեն իրենց շքեղ
տառերներով: Այսպէս տեղի կ'ունենայ
մարդկային աճումը, և քիչ քիչ կը կազ-
մուին ընկերութեան մէջ հարուստ դա-
տակարները որոնք գաղափարաբաններ կը
կ'ընեն, բայց չեն: Վասնզի մաքի աշ-
խատութիւնը հաւատարմ է ձեռքի աշխա-
տութեան, և պարտի անոր յաջորդել, և
թէ կ'ուզուի որ ընկերութիւնը բարձա-
րու չի մնայ:

Կը ճանչնամ նորուստներուն մէջ իրենց
խմտաւոր նայրերուն անարժան որդիներ
որոնք գիշերային խրախճանքներու մէջ
գինիով արքնեալով մտաւոր խանդարման
զատապարտուած, յետոյ անգործութեան
ու ցոխութեան մէջ ապրելով իրենց երի-
տասարդութիւնը, իրենց առողջութեան և
իրենց ճակատագիրը փճալուցած են: Հա-
մակ իրողութիւն է այն թէ անոնք պիտի
պատժուին չառ մօտ ժամանակի մէջ: Ի-
րենց երիտասարդութիւնը պիտի խառամի
ժամանակէն առաջ: Իրենց բաղդը պիտի
քանդուի իրենց տապալէզի վերջաւորու-
թենէն առաջ: անոնք տխուր, անշուք
և աղքատ պիտի անցնին մէջն ապարանք-
ներու առջեւէն զորս իրենց կառկած էին
իրենց հայրերը, և զորս իրենց ախմար
չապլութիւնը, պիտի յանձնէ աւելի ի-
մաստուն հարուստներու ձեռքը: Եւ ա-
սով յաջորդ սերունդ մը պիտի տեսնէ աշ-
խատութիւնը վարձատրուած հօրը մէջ,
անգործութիւնը պատժուած որդւոյն մէջ:

Թրգ. Գ. ԷՍՄԷՐՆԱՆ
Ամաթիա

Thiers

ՄԱՅԻՍ ՄԵԿ

Մազէ՛ արեալոյս, ծագէ՛ նոր արեւ՝ եկուր, համբուրեմ
Շրթունքովս հրպարս՝ նակասդ այսօր՝ կարմիր, լուսադէմ:

Ողջո՛յն քեզ արեւ, ողջո՛յն արեալոյս, մարտի, պայքարի
Յայտարար նրբան. ես պրօլիսարն եմ յաղթական արի:

Մեծ իրաւունք, արեամբ շողախուած յաղթանակն այսօր
Ազատամարտի աննրկուն դափնին՝ գոյներով բոսոր,

Մերն են ընկերնե՛ր: Մեծ ազատութեան բանուորին կենաց՝
Անմոռանալի, կարմիր պրօսուրներն այսօր են հասած:

Այս օրը մեծ է: Պրօլիսարներուն լրսեցէ՛ք կեցցէն
ՅԱՂԹԱԿԱՆ ՄԱՅԻՍ կը պուան անոնք, կը դաս սպարսեն

Մեկնանք ամբողջ լուսեան ու բմբոս ոգին
Կատեղծագործեն՝ պարծանքի անմահ, ՄԵԾ ԳԱՂԱՓԱՐԻՆ:

Վեն գաղտնաբերն ամեռէ՛ր կայծերը երբեք չեն մարիր,
Քանի՛ որ լոյսին ախոյանն ենք միշտ ու մենք անբասիր,

Քանի՛ որ կ'ուզենք նահաւակ դառնալ՝ ճամարսին համար,
Քանի՛ որ կրնանք մեր դասին պատշապան կանգնիլ անդադար:

Բիւր ու կաշառուած ոյժերուն ներքեւ անխիղճ պուռժուան,
Ընչազուրկ մասսան երէկ կ'անգոսներ, բայց այսօր համայն

Մարդկութեան առջեւ կ'ուզէ փոխելիլ կեղծիքն իր նակսին
Սե տակալն ի զուր... իր դէմ գիւնուած է աշխարհն ահագին:

Եւ առեն ամգամ ԿԱՐՄԻՐ ՄԱՅԻՍԸ մահը կը գուժէ
Կեղեմունքներուն, պուռժուաններուն, սրոնք ա՛յ ուժէ

Պիտի դադրին. ահագանցն հնչեց ԿԱՐՄԻՐ ՄԱՅԻՍԻՆ,
Պարզեց դրօշը եւ կեցցէ՛ գոռաց ՎՐԷԺԻՆ ՈՒ ՅՈՅՍԻՆ:

Տեսէ՛ք ընկերներ առիւծը չեկաւ, անխնայ զարկէ՛ք,
Քանի՛ կը կանգնի, քափ տուէ՛ք կրկին ուժին՝ ասրաւեկ:

Անյողդողդ հայրով նոնապարհ բացէ՛ք, հայրեցէ՛ք անդորր,
Բընուութեան պատշապան, յեղտփոխական մեծ տոնն է այսօր:

ԼԵՒՈՆՆԻՆ ՀԱՄԱՐ

Ու՛ֆ, սա ճաշող մթնոլորտը, սազով
ու վշտով համակուած:

Շատ են մարդիկ: Կարգու հոտած,
Ամէնքն ալ տշքերը վա՛ր են սեւեռաւած,
թաղուած՝ խորը մոտժմուռնքի: Չկայ հա-
մարձակութիւն խզելու այս ընկճող, սար-
սուղղեցիկ յոռութիւնը ո՛չ սքի մօտ:

Ինչու՞ այդպէս: Ինչու՞, վայրկեան մը
մարդիկ, մուցնո՞ծ ամէն բան, ապրուստ,
նայ ու կախ, կը խոխոն:— Մահն է
տիրապետողը հոս, այս երբեմնի ցնծումի
բերկրանքի կամարին տակ, ուր խայտա-
ղող զուարթութիւնը, երեք ամիսէ, մա-
նացու յուսթեամբ խեղդեր է, հիւանդու-
թեան տանջող ճիրաններուն տալով իր
վերջին սիրոյ պատւոյն սիրան ու թոքը՝
պատառ պատառ: Հոն զուարճացողներ,
ամէն տեսակ աշխարհիկ կեանք լքած են
այսօր, և կը քաշեն վերջին ամենադառն
կակիծը իրենց երկար օրերու լսիկ հատ-
հետղհեալ մարող կեանքին, Լեւոնի սնա-
շին առջև: Այսօր մէկ բան կայ միայն.
— մահը... և այդ, այդ անգութ ոճրա-
գործը, իր սուր ու վայրի թաթկրուն մէջ
կը խեղդէ ամէն օր ինչ հրդիներ, որոնց-
մէ վերջինը, մատաղ երիտասարդը, պըլ-
լըւած տնոր կոշտ ու խոժոռ ժանիքին
վարը երկարող սոկրուտ վիզէն, քաշքըշ-
ուելով կ'երթայ, կեանքի հոնգրուանը:
Առանց խնայելու կը խլէր, միշտ, մահը՝
պատիժը՝ մեղքին, վրեժը՝ անմեղին, պա-
տուհասը՝ մարդկութեան: Ինչը՞ սակայն
անբիծ հոգիներու: Չկայ՝ պարտախան.
ողիտութիւն այն վայրկեանէն անդին,
ուր ալ չունէ չկայ՝, յաւիտենական յուս-
թիւնն սիրողը, սոսկումազը պատկերնե-
րով:

Լեւոնին համար հաւաքուած են հոն

Լեւոն սիրուն ու սիրուած պատանի մը

Սգոտաւորն էի տեսած զինքը վերջին
անգամ. բնո՞ ճեռ, համակրանք մը ամէն-

քէն դէպի զինքը՝ իր պարկեշտութեան
տնարատ հոգիին համար: Անցեալի փայ-
լուն յիշատակը այսօր մթնոլորտ է ամէն
ինչ, երեակայութեանս մէջ... բաժանու-
մը, գտան կակիծը պիտի՝ կրեն, մայր,
բայր, ու եղբայր... Ախ, տ'սինչ յեղա-
պատառ, սոսկալի՝ ճիշեր... փղձկում...
ինչպէ՞ս համբերել, Այս լացողութիւն,
սրտակէզ հաւաքներուն, լսել ու չարտա-
ուել: Ո՛հ, ամէնքն ալ կրժքերնուն տակ
պոթ յացող կարօտը, բաժանումը, սէրը,
զայրոյթը, իրա՛ր են բաղխում. ու կը
պայթին այնքան անկող որ բողբոջի ձախը
մինչև երկինք կը բարձրանայ: «Ան
կերթայ կ'ըսէ, վարդապետը, խաչն ու
աւետարանը ձեռին, մարմնացնելով յոյսն
ու հաւատքը, յաւիտենական հոնգաւոր ու
երջանկութեան գրկը նեակելու: Երանի
անոր: Ստղազութիւն կը քարոզէ ան
վրդովում հոգիներու... Այո՛ սակայն
ինչպէ՞ր մօռնայ այս բաժանումը: Տառնը
ինք երկա՛ր տարիներ... որուն ճեռ ան-
ցան: Ան, սփոխանքի սիւնն էր կարօտով
առի ընտանիքին, իր հօր վերջին նուէրը...»

Այո՛, եիջանիկ է ան, բայց մի՛նք:
Այս սեւ աշխարհի սեւ սուքին մէջ ինչո՞ւ,
ինչո՞վ ուղեմն քաշենք բեռը՝ այնքան
ծանր, քանի կայ այդ ազտաարար աղ-
ղակը... բայց բաժանման երեակայու-
թիւնը... կը սոսկացնէ մարդ Տեո՛ Լեւոնն
է ան: Ծաղիկներու մէջ կը քնանայ, խոր:
Այ՛ չպիտի արթննայ: Կը խօսի, լուս
խօսքեր կան իր շրթներուն վրայ, որոնք
կիսատ են մնացեր...:

Կուլամ. ո՛ր չեմ ուզեր տեսնել, եր
սարսույ ա՛մբողջ էութիւնս. մարմինս
փուշ փուշ կ'ըլլայ...:

Ամբողջ երիտասարդութիւնը սգուսը է:
Սուգը՝ դառն, կորուստովը ամենապիտի
ընկերով: Հրոմեշտի վերջին համբայրը
դրոշմելու են եկած իր գունատ ու պաղ

ճակտին . . . ամէնքն ուրաժանութի դառն
առչցուն, սե սուգովը տարաբախտ Լեռ-
նին, որ կար դեռ քիչ՝ առաջ, բայց,
չկայ այսօր այլևս: Ամէնոք շիրմին ոտ-
քին առաջ ստան ակնարկներով կը դիտէ
այն վաղամեռիկ պատանիէն մնացած դե-
ղին մարմինը, ու խռովքը կը յորդին ա-
նոնց մէջ, չեն կրնար արտայայտուիլ,
բառեր չկան, իղուր՝ կը փնտռեն:

Ամէնէն խռովիչը սակայն այս լու-
թիւնն է՝ մեռելական: Գնաց ան ան-
դրշիրիմեան ցուրտ ու հանդարտ կեանքը
վայելելու: Գերեզմանիստնաւ հողը ծած-
կեց անոր փափուկ, մաշուած մարմինը:
Ան մեռաւ, սակայն Լեռնը կ'սպրի
դեռ:

Սաւսոն

Յ. ՍԱՍՏԵԱՆ

ԱՐՅՈՒՆՔՍ

Դեռ չի բացուած իդմերդ շուշան
Թողմեցաւ իբր աւան ճերել,
Քամին սուրաց հոգեդ վերել
Տանելով կեանքդ դեպ՝ գերեզման:

Արցունքներու շիրտն այժմէն
Պիտ՝ յօրինեմ ողբ մը անհուն,
Քիչ աստ փառքիդ ես Ալելուի
Անոնց՝ որ քեզ միտք սիրել են:—

ՅՐԹ. Պ ՓԱՓԱՋԵԱՆ

(Ա.Ի — Արտնց)

Ընկերոջս յիշատակին

Երբ կը լսեմ քու մահուան բօր
Կ'զգամ ներսէս ցաւ մը՝ հրաշքոտ
Գուլամ անաւ երգս շիրմիդ մօտ
Քերտովը քնարիս քաղմօտ . . .:

ԼԱԻԱՏԵՍՈՒԹԵՆԷ ՅԵՏՈՅ ՅՈՒԵՏԵՍՈՒԹԻՆ

Ընտրական պայքարին առթիւ, ընդդի-
մայիրներուն յողթելու, անոնց գործելու
պայքանները չեզոքացնելու համար, գու-
մարումներու եւ մամուլի համար յաւել-
ուածական օրէնքի յաղուածներ մշակուե-
լով, մինչեւ օրէնդիր ժողովի գումարու-
մը, վարչականօրէն գործադրութեան դր-
ուած էին: Այդ ատեն իսկ, խմբագրու-
կան յաղուածով մ'անդրադարձած էի այդ
մասին և յոյց ստեղծ էի անոնց հակա-
սահմանադրական ըլլալն ու յառաջխաղաց-
ման արգելք հանդիսանալը. սակայն, այն
ատեն, սակաւին չլաւատեսներու թիւը
խիստ շատ էր, որոնք կը փորձէին հաւա-
տալ թէ ընտրական պայքարի ուարտու-

մէն վերջ օրէնդիր ժողովը իսպառ կը
մերժէ այդ առժամեայ յաղուածներն, ո-
րոնք յետադիմութեան զօրաւոր ազդակ-
ներ կրնան ըլլալ:

Դժբաղդաբար իրականութիւնը բոլորու-
վին տարբեր գոյներով սկսաւ ներկայա-
նալ, նախորդ չաթիւսան երես. ժողովի
գումարման մէջ հաւաքումներու օրինա-
գիծն ընդունուեցաւ, որով բացօդեայ
տեղերու մէջ եղած գումարումները (մի-
թինկ) կառավարութիւնը ըստ իր յամբիւ
պիտի կրնար արգիլել:

Փոքրաթիւ ընդդիմախօսներ միայն բո-
ղոքեցին ու ընդդիմախօսեցին այդ յաղ-
ուածին դէմ, իսկ մեծամասնութիւնը լուռ

համակերպութեամբ մը քուէարկեցին:

Շատ իրաւամբ դիտել կուտային ընդ-
դիմադիրները թէ — երբ կառավարութիւ-
նը փորձէ խօսքի ու մամուլի կաշկան-
դում ղնել, գաղտնի ու գաւաղ-բային
գործունէութիւններ ստեղծուելուն պատ-
ճառ կը դառնայ:

Իսկ օրինագծին պաշտպանները, թուր-
քիոյ ժողովուրդը բացարձակ անքաղա-
քակիրթ դիրքէ մէջ տեսնելով, կը յայտ-
նեն թէ վտանգներ ու յուզումներ նշմա-
րելու ու զգալու պարագային է որ կա-
ռավարութիւնը արգիլելու ու միջնետե-
լու իրաւունք պիտի ունենայ:

Իսկ, իրենք, իբր ժողովուրդի ներկա-
յացուցիչներ զոնէ պէտք է շատ յարձր
տեսնէին այդ տարրը, երկրորդ միթիկ-
ները շատ անգամ տեղական կառավարու-
թեան վերադաս կամ ստորադաս պաշ-
տոնեային, օրինագծի մը, տարող կու-
սակցութեան մը և գործուած անիրաւու-
թեան մը դէմ կ'ըլլայ, հետևորար վալիկ,
Միւքեսարքի, Գայմագամը ևայլն: այդ
գումարումներն, իրենց դիրքին ու շահին
փնտաւար նկատելուն պէս, երեւակա-
յական յուզումներ ու վտանգներ գուշա-
կելով, պիտի արգիլեն, ժողովրդային
արդար բողոքի ձայնը, ինչպէս որ եղաւ
ընտրական շրջանին:

Գումարումի օրինագիծը, երբ ջախջա-
խիչ մեծամասնութեամբ ընդունուեցաւ
ժողովրդին ներկայացուցիչներուն կողմէ,
այժմէն կրնանք վստահ ըլլալ թէ, ներ-
կայս տպագրութեան չի յանձնած գեռ,
մամուլի օրինագիծն ալ կը վաւերացուի:
Պատճառ. — Որովհետեւ տիրող կուսակ-
ցութիւնն իր դիմացն ընդդիմադիր տես-
նել չուզեր, հետևաբար միակ մի այն այս
է ընդդիմադիր օրկանները կաշկանդելու
ու խտրանելու: Օրինակները խիստ շատ
են ու թարմ: Նոյնիսկ, միմիայն Իթթի-
հատը քննադատող օրկաններ դադարման
դատապարտուած են, իբր թէ Իթթիհատ

և օսմ. կառավարութիւնը հրմանիչներ և-
զած ըլլան: Իրաւ է թէ ներկայ կառա-
վարութեան զեկը Իթթիհատըն ձեռքն է,
բայց կառավարութիւնը ժողովրդեանն
է: Եւ ընդդիմադիր կուսակցութիւններ
մէկզմէկ քննադատելու, մէկզմէկ զերա-
զանցելու իրաւունք ու քաղաքացիական
պարտաւորութիւն իսկ ունին, քանի որ
այդ է պարգայման ու յատկապագման
ազգակը: Բայց, առաջ իրականութիւնը
ըզսրովն հակառակն է:

Ընտրութեան շրջանին կը խորհէինք ի՞նչ
Իթթիհատը նախորդ շրջանի իր հակաժո-
ղովրդական քայլերէն թէ իր և թէ եր-
կրին կրած փնտնելէն զգալուած, աւել-
ի ժողովրդական, աւելի ազատական և
ուսելի սահմանադրական քաղաքականու-
թեան մը կը հետեւի, սակայն ներկայիս,
ընդդիմադիրի երեւակայական հեռանկա-
րէն ստեղծմով առիւ, ամէն բնէ որ ժողո-
վրդեան է կը կաշկանդեն:

Իթթիհատական կարկառուն գեմքերէն
Հրաւէին Ճարիր, իր «Թանին» թերթին
մէջ «Երես. ժողովի մէջ ընդդիմադիրի
ի՞նչ պէտք կայ» խօսքերն զարմանքով
կարգացինք և դարձեալ զարմանքով յի-
շեցինք իրեն սախներ առաջ գրած մէկ
յոգումածն որ ընդդիմադրութեան անը-
րաժեշտութիւնը կը չեշտէր ու նոյնիսկ
կը յայտարարէր թէ եթէ Երես. ժողովին
մէջ ընդդիմադիր գոյութիւն չունենայ,
իրենք իրենց մէջէն պիտի ջանան ստեղ-
ծել այդ, քանի որ առանց անոր չկայ
խորրդարանակէն կեանք:

Մեր զեկավարներուն քով կարծիքնե-
րու, ըմբռնումներու և հակադասութիւն-
ներու այսքան յայտնաբերութիւնն ու
հակառականութիւնն նշմարելէ յետոյ,
պէտք է խորհիլ թէ մարդ ի՞նչպէս լաւա-
տես կրնայ ըլլալ:

Այս ընթացքը, կաշկանդումը այս քա-
ղաքականութիւնը, սեղմումը այս սկրզ-
բունքը ամբողջ թուրքիոյ ազգաբնակ-

յութիւնը կը մասնէ յոգեպէտքս, ու րուն հետեանքը լաւ չ'ըլլար...

Գ. ԱՔԻՇԵԱՆ

Պատմական

Ա.Շխարհի Յեղափոխական Մեծ Շարժումները

Ա.

ԱՆԳՂԻԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ

«Ազատութիւնը անօրէն քաղաքներու
կը պարտէք:»
LIEBER

Արեւ երկիրը բաժնուած էր երկու մեծ կուսակցութիւններու: — Կայսերականներ ու բարլամենականներ*. առաջիններու շարքերը կը կազմէին ազնուականներ, կղերականներ ու քաղքենի ֆոլեր (gentry). իսկ բարլամենական զրաշխներքէ համախառնուած էին ոտանիկ դասի պատկանողները (yeomanry), զիւղացիներն ու քաղաքացիական հասարակ ժողովուրդը: Արեւ երկու կուսակցութիւնները, որոնցմէ մին թագաւորին դատին, ու միւսը ժողովուրդին դատին պաշտպան կանգնած էր, ո՛ր ատարէք եկած էին մղելու համար այնպիսի պայքար մը, որուն համար յետագայ դարեր ու սերունդներ արեան հեղեղներով պիտի ներկէին իրենց խոպանալով զաշտերը, բուսցնելու համար ազատութեան երկնքէն ծաղիկը, և աւելորդ վրայ ծաղեցնելու համար արդարութեան մեծաշուք արեգակը: Թագաւորն ու ժողովուրդն էր որ այս սնդակ ի հանդէս եկած էին պատմութեան թատերաբեմին վրայ լուծելու համար իրենց միջև

գտնուող դարաւոր կնճիռները, այս, վճռելու համար իրենց ապագայ զիրքն ու ճակատագիրը իրարու հանդէպ:

Կայսերականները, որոնք կը կոչուէին նաեւ Cavaliers (ձիաւորներ), թունդ պաշտպան կեցած էին Պետական Եպիսկոպոսական Եկեղեցւոյն, իսկ բարլամենականները Մաքրակրօններ էին, որոնց կրօնքը հիմնուած էր լոկ քրիստոնէական հաւատքի վրայ, քան թէ ուրաքին ծէսերու և արարողութիւններու վրայ: Կուր ասլի բերան՝ կրօնական հանգամանքով երեան եկաւ ու վերջապէս քաղաքական գոյն ստացաւ:

Այ պատերազմը սկսած էր այդ երկու կուսակցութիւններուն միջև, և բուռն կերպով կը շարունակուէր մինչև երեք տարի, երբ ահա բարլամենական—ազատական կուսակցութեան կողմէն մէջտեղ եկաւ ճակատագրի մարզը, պատմութեան մեծագոյն դէմքերէն մին՝ Օլիվըր Կրամվէյ, որ պատերազմի սկզբնական չըջաններուն իբրեւ հեծեալօր գնդապետ, արդէն ցոյց տուած էր իր հազուագիւտ տաղանդը թէ իբր մարզիկ և թէ կազմակերպիչ: Անգղիական այս փառաւոր յեղափոխութիւնը վերջապէս ծնած էր այն հանճարի մարզը, որ պիտի գար վերջ մը

[*] Բարլամենականները նաեւ հեղեղակաւորէն կը կոչուէին Roundheads (կլանահէներ): Իրենց լիսուն մազերը կտրած ըլլալուն համար, որպէսզի կայսերականներէն զատուուէին, որոնց մազերը մեծաւ մասամբ երկար էին:

տալու կրօնական անամէջ խնդիրներու, ահաբեկելու բռնապետական անողոք ուժ- ժիւր և այդպէս բարձր պահելու Անգլիա- կան ժողովուրդին ու Անգլիական հայ- րենիքին պատիւը:

Գրումվելի գորագունդը այն տուն մեծ համբաւ հանած էր Գրումվելի Անպարսեյի- ները (Cromwells' iron-sides) անունով: Այս մեծ մարդուն ձեռքին տակ գտնուող զինուորները՝ բոլորն ալ կրօնատէր մար- դեր էին. անոնց մէջ երդում, արքեպու- թիւն և այլ սովորական մոլութիւններ անծանօթ էին. կռուի դաշար իւր մարդ՝ սաղմոսներ ու մեղեդիներ երգելով կը յառաջանային: Ազատական կուսակցու- թեան բոլոր բանակները արդէն կը զեկու- վարուէին ջերմաստիճանով, Աստուածավախ ու բարեպաշտ Մաքրակրօններէ, ահպէս որ բոլոր զօրքերն ալ յանուն Աստուծոյ և յանուն կրօնական ազատութեան էր որ կը կռուէին աննուաճիւրէն. երբ կռիւն զադրէր, Ս. գրքի ընթերցումով կը պարսպէին, կ'աղթէին ու կ'երգէին:

Գրումվել ինքը արդէն թունթ Մաքրա- կրօն (puritan) մըն էր՝ քրիստոնէական կրօնի ամենէն նուիրական զգացումներով տոգորուած, և իր խաչալը չէր ուրիշ բան եթէ ոչ Անգլիական կրօնապէս բարձրացնել, և քաղաքական ազատութիւնը տարածել ունէն տեղ ի հիմուկս պապական բմբռ- նումներու, մարեանդ գաղափարներու և ծիսական ձեակերպութիւններու, որոնք դեռ իրենց միջնադարեան աւերները չեն զադրած գործել: Այսպէս էին ահա Գրումվելի մարդիկները, որոնք պատերազ- մի ամբողջ շրջանին միշտ անպարսեյի մնացին ու միշտ յաղթական, քանիոր կրօնական որ քաղաքական ազատութեանց կրկնակ ոգիներն էին զանոսք նրոնք, ու անոնց ճակատները յաղթանակի չքեղ դափնիներով պնդաբարեւոյնները:

Կայսերական բանակները միջոց ևս չուրկ էին այն խանդավառութենէն ազատու-

թեան այն շարժիչ ոգիներէն, որոնցով կ'առաջնորդուէին բարձրագոյնագոյնները: Կայսերականները՝ իբրեւ հլու կամակա- տարները թագաւորին, նախկին փառա- լորութիւններու քայքայուող սխե- րուն վրայ կեցած տիրելու և բռնակալի- լու անդուկ ոգիով յեցուած, յհարկէ պի- տի ինսպին իրենց ձեռքով իսկ պատրաս- տած աւերակներուն տակ, եկող այն զօ- րաւոր հոսանքին առջև, որ իր բնաւո- րութեամբ նոր էր, և իր էութեամբը կազդուրիչ ու յաւերժական:

1643 ին Նեյքայալի (Naseby) դաշտերուն մէջ վերջապէս Կայսերական ու բարձ- րագոյնագոյն բանակները ու ժգնօրէն կը զար- նուէին իրարու, և Կայսերականները կը ջախջախուին անգարմանիօրէն. հար- ուածը վճռական էր եղած: Նեյքայալի ճակատամարտն առաջին անգամ ըլլալով եկած էր վճռապէս ազդարարելու, որ այ ժողովուրդին համբերութեան բաժակը լեցուած ու բռնապետներու տիրապետու- թեան վերջակէտը դրուած է. Կարդոս թագաւորը պատերազմի դաշտէն կ'ստիպ- ուի փախչիլ գէպի Սկոտլան, յուսարով որ ինն միայն կրնայ վտանգի Սկոտլո- ներու ընտանիքին նկատմամբ՝ Սկոտա- ցիներուն առեցած հաւատարմութեանը վրայ. բայց ի զուր. բռնապետները ուր որ ալ ըլլան, միշտ բռնապետ կը մնան և ասոր համար ալ ամէն տեղէ կը հա- լածուին ու կ'արտաքսուին: Կարդոս, փոխանակ իր Սկոտացիներուն պահանջ- ներուն գոհացում տալու, ու պատմու- թենէն քիչ մը խրատուելու, ընդհակա- ռակը հոն ալ բան մը չէր ուզէր գոհել եղած առաջարկներուն, և իբրեւ հաստա- տուն բռնապետ՝ զինքը իր թշնամի Անգ- լիացիներուն կը ծախեն 400,000 ոսկի:

Այժմ թագաւորը թէպէտ ինկած էր յեղափոխականներու ծուղամիջ. և ա՛յ ա- մէն յոյս վրայ տուած, այնպէս որ այս վերջինները կարող էին զինք իր արժանի-

պատիժին ենթարկել անմիջապէս, և սակայն ան բարեամէնդի մեծամասնութեան տրամադրութիւններուն վրայ կռիւնած՝ դեռ կը մնար նոյն բռնապետը, և նոյն նենգամիտ իշխանը: Բարեբաղդաբար իմ զփրագը արար, խորհրդարանի անդամներէն չափեր կուգէին թագաւորը իր գահուն վրայ վերահաստատել ճիշդ առջի բարձրագոյն իրաւասութիւններով, անոանց անկէ խոստում կամ սպառնալովութիւն ստանալու՝ ժողովուրդին սահմանադրական իրաւունքներուն համաձայն կառավարելուն նկատմամբ: Եւ սակայն

Անկախները (Independents), այսինքն Գրումվել և իր բանակը ատոր մէջ կը տեսնէին իրենց տարած յաղթութեան բոլոր պտուղներուն կորուստը: Հետեւաբար յանգուզն ու կարուկ որոշում մը պէտք էր այդ անպատուարեք կորագործութեան առջի տունելու, այն էր՝ խորհրդարանին արտաքսել այն բոլոր երեսփոխանները, որոնք թագաւորին վերահաստատմանը կուսակից կը գտնուէին:

(շարունակելի)

Թ.ԺԱՄԱԿՈՉԵԱՆ

ԳԱԻԱՌԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Տեղւոյս Ա. Գ. Հնչակեան կուսակցութեան վարչութիւնը հետեւեալն ուղարկած է մեզ՝ հրատարակութեան խնդրանով:

ԽՄԲ.

ԱՆԿԵՆՑԱՂԱԳԻՏՈՒԹԵՆԷ ՎԵՐՋ ԱՆՔԱՂԱՔԱՎԱՐՈՒԹԻՒՆ

ԲԱՑ ՆԱՄԱԿ

ՏԵՂԻՈՅՍ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԱԿՈՒՄԲԻՆ

ՀՈՄ

Շարունակ.

Մայիս 27ին Չոր Ակումբին մէջ հալածող եփրեմ խանի սգանակողական առփա ողորկած էիք մեզ հետեւեալ հրատարակութիւնը.

Ամասիա 26 Մայիս 912

Տէր,

Վաղը ժամը 2ին տեղի պիտի ունենայ սգահանդէս մը ի սրահի հայ ազգի գործ խոր եփրեմ խանի անմահ յիշատակին:

Արդ յամենախումբս կը հրաւիրեմ Չեզմէ բանախօս մը, եւ կը խըն-

դրեմ որպէսզի բարեհաճիք շուտով մեզ տեղեկացնէք:

Ազահանդէսի կազմակերպիչ
յանձնախումբ

ԿՆԻՔ

Ձեր այս հրախրազրէն յետոյ մեր նշանակած քանակութիւն անագնուօրէն թե՛ չ'սպնույ փրայ հետեւեալ ցաւակցական գիրն ուղարկած էինք Ձեզ.

Ամասիա 30 Մայիս 1912

Հ. Յ. Դաշնակցութեան Տեղ. Կոմիտէի

Դիւանի յանձնարարութիւն

Հոս

Հաղապարստի փառաբանի Եփրեմի սր-
գանակեղծութիւն մեր հրատարակել փրայ փու-
քացուցած էինք, մասնաձիւղիս կողմէ,
ներկայացուցիչ քանակաւոր. սակաւի
դոմ անկէ առանց ներդրութիւն խթ-
մելու եւ յետագիւն արագաձուլելու ա-
նու եւ ժողովուրդին պարգեւաւ. բնաւ
սրաւադրելի ընկեր չափ անգնութիւ-
նը չե՛ք ունեցած:

Մենք իբր մեր երեց եղբայրք, կո-
զանք յորդորել ձեզ որ ասկէ վերջ ի-
մանչիւր ժախճակիս ու փայլերէս.

Այս պաշտօնի ան գործեանն ալ փրայ-
դարձուցաւ մեզի:

Արդ, Պարոններ,

Հասկնալ հրապարակաւ ու նշանակ Ձեր անուագործեանք յայտարարել թէ ի՞նչ քանի
մեզ պաշտօնաւ ենք: Ձեզի յեղափոխական անուանելո՞ւն, Ձեր սովորական գործակերպը
ֆենադասեղո՞ւն եւ կաւ ուղղակիս ու յեղափոխականի փայլ գործունեութեան հրախրեղո՞ւն
մեզ պաշտօնաւ ենք. հասկնալ հրապարակաւ մեր պաշտօնելուն արագաձուլ յայտնել, հակա-
ռակ պարագային Ձեզի պիտի անուանենք յեղափոխականի դիւանիսն սակ ծածկուած Ա.Ճ.Ա.-
ԲԱՐՆԵՐ:

Այսպէսով կը բարեւեմք

Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան Ամասիոյ Մ. ճիւղի Վարչ.

ԿՆԻՔ

ԺԱՄԱՆՈՒՄ.—

Հ. Յ. Դաշնակցութեան կեդրոնի ան-
դամներէն Տեառ Գ. Խաճակ (Արծիւեան)
տեղո ժամանելով եւ Դաշնակցութեան ա-
կումբին մէջ քանի մը բանախօսութիւն-
ներ տալէ յետոյ Մարգարէն մեկնեցաւ:

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ.—

Մայիս 29ին Գ. իրիկուն Դաշնակցու-
թեան գլխաւին մէջ զինուորական իշխա-
նութեան շանքերով ու առաջնորդու-

թեամբ, թուրք երիտասարդներու կողմէ
ներկայացուեցաւ Համբոյի Գահակցութիւ-
նը տրամը եւ պզտիկ կատակախոյ մը ի'
նպատակ Օղանուրի: Այս ձեռնարկը իր
սկզբնական քաղին մէջ իսկ չ'տրուաւ. պիտի
էր: Կր յաւանք թէ մեր թուրք հայրե-
նակի ներս ալ. զէպի ձապանը ըրեն
չար լուր կը կրկնեն:

ՍԳՍ.ՀԱՆԴԵՍ.—

Մայիս 27ին Կիրակի օրը Դաշնակցու-

թեան զիւպին մէջ Զօրավար եփրեմ
նանի իյիշատակ Սգահանդէս մը տեղի
ունեցաւ :

ԵՐԿՐԱՇԱՐԺ. —

Մայիս 30-ն ժամը 5.40 (Ը.Ե.) ինչպէս
սխալն նորառ. ուղղութեամբ, երկրաշարժը
ցնդում մը տեղի ունեցաւ, որ տեւեց 3-4
երկվարկեանի չափ :

ՆՈՐ ԲԵՐԲ. —

Վերջին չափաթնեցա տիրող երաշտու-
թիւնը դրեթէ նոր բերքը փնտցուց : Ժու-
ղովաբղը աղօթքի երեսը սկսաւ :

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՆԻԷՄՆԵՐ. —

Կիւմանք թէ իբր. վարժարանի ու-
մաւերի քննութիւնները Յունիս 11ին.
Աղղ. աղղ. վարժարանի նոյնպէս Յունիս
11)ն և Աղղ. մանչերու վարժարանինը
Յունիս 18ին պիտի սկսին եղեր. իսկ վր-
կարեկանի բաշխման հանդէսները՝ աղղ.
վարժարանինը Յունիս 17ին և մանչերու-
նը Յունիս 17ին տեղի պիտի ունենայ եղեր :
Մինչև այդ առին այս ճիշդ ու ան-
տանկը ոգերուն դպրոց. շարունակել տա-
լը, աշակերտութիւնը ուղակի փթամու-
թեան տառնորդել և մանկավարժութենէ
ի նստնայ կը նշանակէ :

ԴԱԴԱՐՈՒՄ. —

Խորին ցաւով կ'իմանանք թէ Պոլիս
նրաւարակուող Նոր Աշխարհ թերթը որ
իբ հիմնա ի բովանդակութեամբը ներկայ
մամուլի իրախանութեան մէջ գնահատելի
պակաս մը կը լրայնեք Պատ. Առեանի
կողմէ դադարման դատաւարտութեամբ է :
Սակայն կրկին ուրախութեամբ կ'իմա-
նանք թէ, քանիմը վատ հոգի ազգային-
ներու մաւրատն ու խնդումը փոքր ձգելով
միայն լայն պիտի տեսնէ եղեր :

Արտոնահր՝ ՀԱՅԿԱՇՊՈՒՆ, ԹԱՊԻՊԵԱՆ,

Խոնքարապետ՝ ՄԻՆԱՍ ԻՓԷՔՃԵԱՆ,

Տպ. ՅԱՎԱՆԵԱՆ ԵՒ ԵԱՐՏԸՄԵԱՆ

شونات

قوراقلق

بر مدندن برو حکمفرما اولان قوراقلق
داخل شهر و قرا محصولاتينک قسم اعظمينک
محبوبه بادی اولديغندن داخيره قياتلری اهميتی
درجه زرقی المشدرد .

طياره منفعتته

شهر مز نامنه مبايعه اولنه حق طياره منفعتته
مدار اولوق اوزره مایس ۲۹ محبی صالی کيجه
سی طاشناقسیون فلرینده شهر مز کنجولوندن
مرکب بر هیئت مخصوصه طرفندن موقع تمام
شویه وضع اولنان «بیلدیزک صوکی» بیه سی
اجرا قلنمشدر .

حرکت عرض

مایس ۳۰ محبی کوندوز الاتوقه ساعت اونی
چریک کچرک شهر مزک شمالندن جنوبیه طوغری
اوفق بر حرکت عرض وقوع بولدی ایسه ده
بر کونا خساراتی موجب اولمشدر .

چکرکه

مرزيفونک یدی قیر موقعنده پیدا اولنان چکر
که تک احساسی خصوصنده مرزيفون قائمقاملندن
واقع اولان مراجعت اوزرینه متصرفز احمد
ماجد بک افندی حضر تریله محل مذکوره عزیمت
ایدرك خشارانک اتلافی ایچون تداییر لازمه اتحاد
ایله محبوبه موافق اولمشدر .

صفر دن ۱ بچق درجه یوقاریده ایدی ، ساعت سکر راده لریده ایرمق طرفدن صفوق وسرت
 ز روزکار اسمکه باشلادی و ایرماغك بنددن دوشن صو طمله لرینك تحصل ایتدیكى رطوبتلی
 بخار سیندن بش دقیقه طرفیده درجه صفر دن اوچه تنزل ایدرك ایرمق طرفیده اولان
 باغمك كرك سیزه واتى و كرك طوت یایراقلری قاوردی . اگر تحتدن معمول كزر دیوارم
 اولمش اولیدی (تهكم سنه ایه ایچون یادره جم) ایرماقدن طرف كلن روزکاره قارشى قور و
 بو باغمی ائك شدندن محافظه ایدر و قیراغیدن خلاص ایدردم فصله كم بنم دیگر باغمه قومشوم
 سمید علینك باغی و بشقه بر اوچنجی باغلك كرك سیزه واتى و كرك یایراقلری ضرر دیده
 اولمديلر . باغلك دروننده و متعدد بخارنده اوجاقلردن حاصل اولان دومنلر سایه سنده قور-
 تلدیلر . شاید ایرماغك مذکور بندى اولمازسه ایدی ویا كزر تحتدن بز دیوارم اولسه ایدی
 بو باغم دخی دیگرى كبی سلامتده قاله جقدی ..

اغوب قلاين افنديك ویرمش اولدینی اشبو ایضا حاتدن مستبان اوله جنى وجهه الاكلا-
 شیه ووركه اصول مذکورك بو كبی شدتلی قیراغی وقوعنده سیزه وات ، لغوت یایراقلری میوه و
 سائر محصولاتك خساراندن سالم قالمه سی بالتجربه اكلا شلمشدر . شو خالده وقوع ملحوظ
 اوله جق خفیف قیراغینك اوكتی اشبو اصول ایله المق دها قولای اوله جنى بك طبیعی ایسه ده
 لکن اصل مسئله بفچوانلرك كندی بالذات منفعتلری نظر اهمیتیه الهرق اصول مذکوره رعایت
 ایدوب موقع اجراه توپا جقلری ؟ بز بو خصوصده شبهه لیز . شو خالده اشبو وسیله جمیله ایله
 بز وظیفه عد ایدرز ، دیون عمومیه ، زراعت ، بلدیه و تجارت هیئات محترمه لرینك حسن انظاف
 رینی دعوت ایتمه کی شویله كه اشبو مفید و جزى مصارفله آلد ایدیه لجه ك اصولی فرقلی فرقلی
 لسانلره اچیق عبارتلرله ترجمه برله اها لیه توزیع ایتدیرلمه سی خصوصنده همتلری بالخاصه انتظار
 ایلرز . ایکنجی قیراغی زمانلرنده اهمیت موقع و مرکز لرده بر قاج مأمود بولندیروب هواتك
 تبدلاتی کشف برله قیراغینك نزولی درك ایدرك بالاده کوستریلان وسائطك زراع و بفچدوان
 صنفه موقع تطبیقه وضع ایدیرلمه سه نظارت ایتمه مکلف بولونسونلر . ارائه اولنان اشبو ایکی
 وسیطه لرله باغ و بفجه لر مزك قسماً اولسون ماده بیوك بر خساراندن وقایه ایدیه لجه کی بدهیدر . ظن
 بدر ایسه كه بو دائره لرك وظیفه سیدر دوشنمکل . صرف ایتمك وبعده استفاده ایتمكدر .

دها مفصل معلومات المق استمیان اهل مراق طوغریدن ایداره خادمزه و یاخود اغوب
 قلاين افندیه مراجعت ایلدیكلرنده کمال ممنونیتله مطالبات واقعه لرینه مکمل و مفصل معلومات
 اعطا اوله جنى دخی ابروجه بیان اولتور .

نیساک ۱۳ نجی صباح ، اوکلن و اخشامنده میزان الحراره درجه لرینک ۷ دن ۳۰ و ۳۰ دن ۶ یتزل ایتهمسی هواده سیوک بر تبدلات واقع اوله جفته دائر شبهه و برمه سنه مبنی همان اول اخشام کشیف دومان حاصل ایدیجی ماده لر احضار ایتکه تثبیت ایتدک ، کرچه اول کیجهنک ساعت بشنده کوک یوزنده خفیف بلوطلر کورتمیه باشلادیلر سده انلرک غایت انجه و خفیف اولمهسی دومان و بریجی ماده لر یاقق قرارمه مانع اوله مدیلر چونکه میزان الحراره ۵ بجق کوستریوردی . دومان پیدا ایتک ایچون ایلک دفعه قوری چورچوب تدارک ایدوب باغلرک متعدد محارنده یغلر تشکیل ایدرک آتشلد انلر یاندقدن صکره اوزرینه کوریه ایلر قاریشق صمان قویدم . نه زمان بولورده قورویورق یاعمهیه باشلادیلر چوچه دومان حاصل ایتدیرمک ایچون اوزرینه صو دوکدم . جنوبی طرفدن خفیفجه ر روزکار اسمکده اولدیفندن دومان تمامیه باغمه سوق ایتک ایچون قوموشومک باغنده دخی بشقه اوجاق یابوب یاقمهیه مجبور اولدم . اورته سنده سعید علی اسمنده برینک دخی باغی اولوب مرقومه اقدیجه و برمض اولدیغ ایجاب ایضاحات نتیجیسی اوله رق قانع اولوب بزمه برابر کمال اشتیاقله چالیشمقده ایدی . دومان اچیق ایرماق نام محله قدر اسباط ایلدی .

وقت فخره یاقین ساعت یدیده روزکارک استیسی تعطیل ایدوب دومان قاطی بر بدط شکلده تنون بو موقع باغلرینی احاطه ایدوب ستر ایتدی . مالوع شمسسه یاین باغلرمنی یکدیگرندن تفریق ایدمیه جک درجهده قالن ر سیس استیهاب ایتشدی . اشبو دنییر سایباندی بوکسک محله لوده کی باغلردن ماعده جوارمزده کیلر قیراغیدن سالم قالدیلر .

نیسان ۲۷ سنده لوقان و اطهیه نام بوکسک محلهده قار ککش اولدینی کورلدی ایسهده نصف الیلده اطهیهده کی قارک اریوب لوقانده کی علی حالیه قالمقده ایدی . وقت غروبده هوا کرچه تمامیه اچیلمش ایدی ایسهده لکن میزان الحراره صفردن یوقاری ۵ کوستریوردی . هواک بو قدر صفوق اولمهسی تکراراً قیراغینلا کله سنه قوی دلیللر ایدی ساه علیه بز تکرار دومان حاصل ایدن اوجاقلری آتشله مک اوزره حاضرلق کوردک کیجهنک ساعت بشنده هوا غایت برای و درجه ایسه صفردن یوقاری ۴ کوسترمکده ایدی . شرق جنوبی طرفنده بولنان و یکدیگرندن ۱۰-۱۵ مترو مسافده اولان اوجاقلدی یاقمهیه تثبیت ایتدک چونکه روزکار اول طرفدن اسمکه ایدی . ساعت ۶ ده روزکار دورنی تبدیل ایدوب بشلدن اسمکه باشلادی درحال طرف مذکورده بولنان یکی اوجاقلری احراق ایدرک مبدلوات قاتی دومان چیقارمغه مباشرت ایلدک . هر طرف قالن بر سیسله احاطه اوللرب ساعت ۷ بجقده باغلرمنک اوزرلری بلوط شکلده قوی بر دومان استیلاء ایلدی . بو وقتیه قدر جیک دخی یوقدی صفوق ایسه

اماسیه

طشره منادیسی

نومرو ۱۶

۳۰ مایس سنه ۳۲۸

برنجی سنه

قیراغی و احوال اقتصادی مز

سیان ۱۳-۲۸ نده قیراغینک ایرات ابتدکی خسارات بتون اناطولیہ تأثیر ابتدکی کبی
اماسیه دخی مضرت عظیمه بی موجب اواشدر ، اشبو خصوصه عطف نظر ایتهدن کچمک طوغریدن
احوال اقتصادی منزی بر طرف ایتش اوله جغمز طبعدر .
ایکی سنه دنیرو بیاجده حکمفرما اولان قریزلرک و قولرا سیبیه احداث اولان قرانتالرک
ایلرو کترمش اولدینی ضررلر حقننده دوشتمکده ایکن ایتالیا محاربه سی بمالک عثمانیه ک احوال
اقتصادیه سی اوله ر حاله کتردی که بزم دخی اندن حصه سز قالمیه جغمز طبیی ابدی ، اماسیه ک
زراع و تجار اهایسینک امید یکنه سی سنه حالیه محصولنده تمرکز ایتش ایکن انک دخی ۷۰-۸۰
بیک ایرا ضرر ایرات ایدرک بر کونده محو و نابدید اوله سی عموم قضا سکنه سی بر نوع امیدسزلفه
دوچار ایشدر . بالخصه زراعتدن ماعده بر کونا چاره تعیشی اولیان بنچوان طاقینک حال بریشانیه
بادی اولمشدر .

بر بنچوان صنفنک نوامیدسزافی و انلرک احوال اقتصادی سی نظر دقتیه الهرق بو کبی
قراغی و سائر کونا سیلردن طولانی ایلرو کلن ضررلرک قسماً اولسون اوکنی المی . مقصدیه
بروجه زیر کوستره جکز .

اغوب قلاین اقدینک شهر من داخلنده ایچ آی واسیل نام موقعنده بولنان ایکی قطعه
باغنده موقع تطبیقه وضع ایلدیک بر ابتدائی اصول فی که بو تدبیر سایه سننده کشیدی باغلی
قراغیدن سالم قالدینی کبی دیگر اوچ قطعه باغ و طوتلقلرک دخی کرک طوت یپراقلری و کرک
سبزواتی قراغینک تأثیراتندن تمامیه ازاد قلمشلردر .

مومی الیه شویله جه نقل ایدیور .

Փ. ՀԱՅԳԻ ԱԶԳ. ՊԱՇՏ. ՄԱՐԽԻՆՆԵՐԻՆ
Այն բոլոր Ազգ. պատճառական մարմիններն
որ մեր անցեալ 43-ը. թիւի խմբագրականը
կարգալի յետոյ կ'ուզեն մեր միջոց աւ Տեսուչ-
ներ, Տեսչուհիներ. Ասուցիչներ, Ասուցչու-
հիներ ու Մանկապարտիզպան- հիներ հայ-
րայրել' թող բարեհաճին զրել մեզի թ'է:

1.— Ի՞նչ տեսակ պատճառ եայ կ'ուզեն, ի՞նչ
գործի եւ ի՞նչ նկարագրու համար.

2.— Ի՞նչ պատճառներ ունին: Եւ այլն:

ԱՌԱՅԻՑՁ ԻԹԵ ԼՆ. —

'Նոյնպէս բարձր այն' Տեսուչներն ու Տես-
չուհիներ, Ասուցիչներն ու Ասուցչուհիներն
որ մեր լիւրջ խմբագրականը կարգալի յետոյ մեր
միջոցաւ պատճառ ձեռք բերել կ'ուզեն թող
բարեհաճին զրել մեզ'

1.— Բնիկ որ տեղացի են, ո՞ր դպրոցէն
տրջանաւարտ են. Բակ' սարի է ի՞նչ պատ-
ճառ կը վարեն եւ որ տեղերու մեջ, ի՞նչ նիւ-
ղերու համար նախասիրութիւններ ունին:

2.— Բարձր պատճառականութեան ու
Ասուցչութեան վկայական ունին:

3.— Ո՞ր տեղերու մեջ կ'ուզեն պատճառ-
նախարար. ի՞նչ տեսակ պատճառներ. Եւ ի՞նչ
պայմաններով: Այժմ ո՞ւր կը գտնուին.

—ԻՄԲ.—

Ծ. Խ. — Ինչպէս խմբագրականին մեջ ա՛յ
բաւական է, Փ. Հայրի տրջանակէն դուրս ա՛յ
եղած գիտնականներու գոհացում չալ պիտի
ջանան:

Բացումս է բաժանարարագրութիւն

«ԿԱՎՈՐՈՇ» Ի

Ծագածնկարիչ' Խմբագրատեղ'.

Մ. ԹԱՇՃԵԱՆ ԵՐ. ԹՕԼԱՅԵԱՆ.

Դ. ՏԱՐԻ ՆՈՐ ՇՐՋԱՆ

Գլխայ մասի հայ երգչախումբ

Մայիս 42-էն սկսեալ Կապուտը կը սկսի
հրատարակելու կատարելագործեալ ՄԵ-
ԾԱԴԻՐ երգիծալիւթի ձեւով:

Խիստ մեծադիր և հետաքրքիր ծաղրա-
նկարներ ամէն թիւին մէջ: Պիտի հրատա-
րակուի չորսուրբ մէկ անգամ, և պիտի զրա-
զի պարտական յաջորդական խմբիկներով:

Տարեկան գաւառի համար 54 դր.

Վեցամսեայ » 27 »

Արտաստաման տարեկան 44 դր.

Վեցամսեայ 7 »

Վճարումները կանխիկ կ'ըլլան:

Ծանօթ. — Գաւառի և արտաստամանի
համար ոչ պարտաւոր գործակալներ կը
վնասուին:

Հասցէ՝ (Gavroche) Cons | ple Pera

اوتل کیره میتجان

مدیر

طرازونى آرداشيس

مرزيفون

يکى - اوغرى بولده هواى کوزل ويکى يابش

اولان بواوتلده هر شئى غايتميز اولوب اوتلك

هديرى مسافرلىرى صولك درجه ممون ايلده جکى

نعيميد ايلر

ՕԹԷԼ ԲԻՐԷՄԻՏՃԵԱՆ

ՄԱՐՁՈՒԱՆ

ՏՆՈՐԷՆ

ՏՐԱՊԻՋՈՆՑԻ ԱՐՏԱՇԷՍ

Նոր չիտակ ճամբուն (եկնի տողաւ ետ)

վրայ օգտաւուն դիրքով և հանգստաւէտ

ամէն պայմաններով օժտուած նորահաւ-

առա հիւրանոցին մէջ ճամբորդներ ամէն

տեսակ դիւրիւթիւններ ու հանդիսա կը

վայելեն, ճաշակաւոր, կանոնաւոր և

մաքուր սպասարկութիւն: Միտի հիւրա-

նոր Մարզումանի մէջ, ուր իշխանաւոր

պիտի մէկնի գոհունակութեամբ:

سیغورطه جی

سیمون قارقیان

آماسیه

آلیانسه عمر سیغورطه سی لانتاشه حرمه

سیغورطه قومپانیله رینک اجتی در.

مناسب شرائطله هر نوع سیغه. ماء بشاری

یابار. آرزو ایدنلر بر دفعه تجربه ایستونلر

جیشیان اوتین اگا دکانتک اتصلنده باغانی

۵۰ (الی) بارهیه معدن کوردی صاتیور.

هر کس فرصتدن استفاده ایستون.

ԱԶԳ. —

Թերթըս 43 թիւին մէջ ծանուցուած

Քաջունի Գեղարու. Խումանի և իւրաքանչիւր

եզիպոստի մէջ Ապրիլ 40-ին յաջուած

վիճակահանութեան շահող երկու թիւերն

են Ա. 456 Բ. 476

ԱՄԱՏԻՅԷ

Տրադիցիոնալ
Բր. Տեղական Բր. Միություն
Ար. Գր. Բր. Միություն

Սահ. Բր. Միություն
Մեմ. Բր. Միություն
Բր. Միություն

Ինքն

Սահ. Բր. Միություն

Մեմ. Բր. Միություն

Սահ. Բր. Միություն
Մեմ. Բր. Միություն
Բր. Միություն

Մեմ. Բր. Միություն

Մեմ. Բր. Միություն

Մեմ. Բր. Միություն

Մեմ. Բր. Միություն

Մեմ. Բր. Միություն

Մեմ. Բր. Միություն

Մեմ. Բր. Միություն

Մեմ. Բր. Միություն
Մեմ. Բր. Միություն
Մեմ. Բր. Միություն
Մեմ. Բր. Միություն
Մեմ. Բր. Միություն
Մեմ. Բր. Միություն
Մեմ. Բր. Միություն
Մեմ. Բր. Միություն
Մեմ. Բր. Միություն
Մեմ. Բր. Միություն

Մեմ. Բր. Միություն
Մեմ. Բր. Միություն
Մեմ. Բր. Միություն
Մեմ. Բր. Միություն
Մեմ. Բր. Միություն
Մեմ. Բր. Միություն
Մեմ. Բր. Միություն
Մեմ. Բր. Միություն
Մեմ. Բր. Միություն
Մեմ. Բր. Միություն

Մեմ. Բր. Միություն

Մեմ. Բր. Միություն

Մեմ. Բր. Միություն